ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան **« 06 » հուլիսի 2020 թ.**

ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայությունը (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն)՝ ի դեմս Պրոբացիայի ծառայության պետ Գևորգ Սիմոնյանի, մի կողմից, և «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀԿ)՝ ի դեմս ՀԿ-ի նախագահ Նինա Կարապետյանցի, մյուս կողմից, (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր),

հիմք ընդունելով «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի պահանջն այն մասին, որ Պրոբացիայի ծառայության գործունեությունը հիմնված է հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցության վրա,

կարևորելով Պրոբացիայի ծառայության դերը և նշանակությունը, ինչպես նաև նրա գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը,

բարձր գնահատելով պրոբացիայի ծառայողների մասնագիտական պատրաստվածության մակարդակը և կարողությունների զարգացումը,

խրախուսելով համագործակցության ծրագրերի իրականացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող պրոբացիայի ոլորտում.

հաշվի առնելով «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպության առաքելության՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում հետազոտությունների, վերլուծությունների և գործնական պաշտպանության մեծ փորձը և ներուժը,

կնքեցին սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է

1. Սահմանել Կողմերի միջև համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները և եղանակները:

2. Զարգացնել Պրոբացիայի շահառուների նկատմամբ իրականացվող վերասոցիալականացման միջոցառումները և ծրագրերը:

3. Աջակցել պրոբացիայի ծառայողների վերապատրաստմանը մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված ոլորտային ուսուցողական ծրագրերի միջոցով:

4. Նպաստել Պրոբացիայի ծառայության նկատմամբ հանրային վստահության աճին՝ Պրոբացիայի ծառայության գործունեության, ինչպես նաև ոլորտում տեղի ունեցող զարգացումների մասին հանրային իրազեկման միջոցով:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1. Կողմերը համատեղում են կարողությունները՝ պրոբացիայի շահառուների համար օրինապահ վարքագծի դրսևորման, իրավագիտակցության բարձրացման, հասարակություն վերաինտեգրման, նոր հանցագործությունների կանխման նպատակով վերասոցիալականացման միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու գործընթացում:

2. Կողմերը հնարավորություն են ունենում համատեղ իրականացնելու պրոբացիայի ոլորտի զարգացման, դրա մասին հանրային տեղեկատվության տարածման՝ հանրային քննարկումների կազմակերպման, սոցիալական տեսահոլովակների, համատեղ զեկույցների, մամլո հաղորդագրությունների, հայտարարությունների պատրաստման, հանրայնացման և այլ գործառույթները:

3. Կողմերը միջոցներ կձեռնարկեն պրոբացիայի շահառուների համար օրինապահ վարքագծի դրսևորման, նրանց իրավագիտակցության բարձրացման, հասարակություն վերաինտեգրման, նոր հանցագործությունների կանխման նպատակով պրոբացիայի ծառայողների կարողություններն ու հմտությունները զարգացնելու ուղղությամբ:

4. Կկարևորվեն Պրոբացիայի ծառայության գրասենյակային և տեխնիկական պայմանների բարելավմանն աջակցությունը, առաջացած խնդիրները կարգավորելուն ուղղված լուծումների առաջարկումը, Պրոբացիայի ծառայության գործունեության

ջատագովումը միջազգային կառույցների և ծառայության կարիքների և զարգացման ծրագրերի ներկայացումը դոնոր կազմակերպությունների շրջանում:

5. Կողմերի էլեկտրոնային կայքէջերում միմյանց՝ որպես համագործակցող կառույցների վերաբերյալ տեղեկությունների տեղադրում և տարածում:

6. Կողմերը կարող են իրականացնել այլ համատեղ ծրագրեր:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

1. Սույն հուշագրով նախատեսված համագործակցության արդյունավետ իրականացման նպատակով Պրոբացիայի ծառայությունը և Հասարակական կազմակերպությունը նշանակում են պատասխանատու ներկայացուցիչներ:

2. Պատասխանատու ներկայացուցիչները համակարգում են Կողմերի հաղորդակցությունը, կազմակերպում են համատեղ աշխատանքային հանդիպումներ, խորհրդակցություններ և վերահսկում փաստաթղթերի մշակման աշխատանքները:

3. Պատասխանատու ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում ծրագրի/երի շրջանակներում տեղեկատվության թափանցիկության, ստույգության և մատչելիության ապահովման, ծրագրի/երի իրականացման ընթացքում խնդիրների ժամանակին բացահայտման և պատեհ լուծումների առաջարկման համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կողմերն ընդունում են, որ սույն հուշագրի շրջանակներում չեն կարող առաջանալ ֆինանսական կամ այլ նյութական պարտավորություններ՝ բացառությամբ, երբ Կողմերը լրացուցիչ համաձայնագրերով հաստատում են նման պարտավորությունները համագործակցության որևէ ուղղությամբ իրականացվող համատեղ ծրագրի/երի շրջանակում:

2. Սույն համագործակցության հուշագրով նախատեսված գործունեությունը կիրականացվի Կողմերի կողմից՝ ծրագրով/երով նախատեսված շրջանակում՝ առանց պետական բյուջեի համար լրացուցիչ ծախսեր առաջացնելու:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն համագործակցության հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2. Սույն համագործակցության հուշագրի լուծումը կամ փոփոխումը կարող է կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

3. Սույն համագործակցության հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ:

4. Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետ՝	«Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ՝
Գ. ՍԻՄՈՆՅԱՆ	Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑ